

Գաղաքին ճարտարարուեստներուն մասին խօսած ատեն կը գրէ .

«Յերկրին մետաքսէն զատ, որ բաւական նըշանակելի է, Թողատի մէջ ամէն տարի կը դործածեն ութը կամ տասը բեռ Պարսկական մետաքս: Բոլոր այս մետաքսը բարակ կարի մետաքս կամ կոճակ շինելու մետաքս կը շինեն: Այս առևտուրը շատ լաւ է»³⁾

Իսկ քաղաքին վաճառականութեան մասին կ'ըսէ .

«Թողատը պէտք է նկատել Փոքր Ասիոյ առևտուրին կեդրոնը: Տիրապէքի կարաւանները տասնհաւթը օրէն հոս կը հասնին, իսկ ձիաւոր մը տասներկու օրէն կրնայ կտրել: Թողատէն Սինոպ վեց օրուան զնացք է: Հետեւակ մը չորս օրէն ալ կրնայ երթալ: Թողատէն Պարսկաստան կարաւանները քսան օրէն կ'երթան, իսկ ձիաւոր մը տասնեւհինգ օրէն: Անոնք, որ Թողատէն ուղղակի Չմիւռնիա կ'երթան, առանց Անկիւրիա կամ Պուրսա հանդիպելու, քսանեւեօթը օր կը ճամբորդեն Չորիով, իսկ քառասուն օր ուղտով, սակայն աւաղակներու մեծ վտանգին կենթարկեն ինքզինքնին: Մեր կարաւանը Չմիւռնիա կը դիմէր, սակայն մաս մը զնաց Պուրսա, եւ մաս մըն ալ Անկիւրիա, աւաղակներէն խուսափելու համար: Մեր հայերը մեզի հաւաստեցին, թէ իրենք աւելի կը ստանան իրենց մետաքսը Չմիւռնիա տանելով, որովհետեւ Gangel (Կէնճէ) ի մէջ զնած ըլլալով, որ Պարսկական սահմաններուն վրայ է, Պաթմանին քսան զրաուն տուած են: Որով՝ նոյն ծանրութիւնը Չմիւռնիոյ մէջ ծախելով՝ երեսուն զրաուն սակով կը շահին երեք զրաուն զուտ (4), բոլոր ճամբու ծախքերը վճարելէ վերջ: Ասիկա շատ նկատե-

լի շահ մըն է, որովհետեւ պաթմանը միայն վեց օրայ կը կշռէ, այսինքն՝ 12 փաունա 12 աունս: Զի մը վեց հարիւր փաունա բեռ կը կրէ, իսկ ուղտ մը հազար, ուստի կարելի է հարիւր զրաուն շահիլ իւրաքանչիւր ձիու բեռէ, եւ հինգ հարիւր լիվրը (5) իւրաքանչիւր ուղտի բեռէ: Վաճառականներ, որոնք մետաքսի տասը բեռ կը տանին, այս հաշուով կը շահին հազար զրաուն, եթէ չի դործածեն, եւ հինգ հազար լիվրը, եթէ ուղտ դործածեն, առանց հաշուելու ետ բերուած ապրանքներէ ձեռք բերուած շահերը»⁶⁾

Հոս միջանկեալ ծանօթագրեմ, որ Թողատի վրայով Չմիւռնիա տարուած Կէնճէի կամ Գանձակի մետաքսին համար հայ վաճառականները կարնոյ մէջ իբր տեղական մաքս «կը վրձարեն ութսուն զրաուն իւրաքանչիւր ուղտի բեռի, որ 800-էն 1,000 կշիւ կը կշռէ»⁷⁾

Tournefort կը վկայէ, որ «Պարսկաստանի, Շամախի ու Գանձակի մետաքսը Թիֆլիզի մէջէն չանցնիր: Անկէ կը զդուշանան վաճառականները՝ խուսափելու համար հոն իրենց վրայ զրուելիք չափազանց մեծ հարկերէն: Հայերը կ'երթան եւ կը զնեն մետաքսը Գանձակի ու Շամախի մէջ եւ փոխադրել կուտան Չմիւռնիա կամ Միջերկրականի վրայ ուրիշ նաւահանդիստ մը, հոն Փրանկներուն ծախելու համար»⁸⁾

Հոս աւելցնեմ, որ Չմիւռնիա, հում մետաքսի լաւագոյն հրապարակներէն մին ըլլալով հանդերձ, հիներէն մին ալ էր:

1614-ին William Lithgow իր ուղեգրութեանց մէջ կը գրէ .

«Չմիւռնիա ունի մեծ առևտուր բոլոր ազգերու հետ, մասնաւորաբար լաւ մետաքսի»⁹⁾

Նոյնը կը կրկնէ քառորդ դար մը վերջ

3) Անդ՝ էջ 271:
4) Գրաունը հինգ շիլլինկ կամ մէկ տուր քսան սէնթ է Միացեալ Նահանգաց զրամով, անշուշտ միշտ ոսկեզրամ հաշուելով: Նոյն ատեն գիտելի է, որ Գանձակէն կամ Շամախէն բերուած իւրաքանչիւր պաթման հում մետաքսի ճամբու եւայլն ծախքը հայ վաճառականին կ'արժէր եօթը զրաուն, որ իրապէս խոշոր ծախք է:

5) Պրանսական հին դրամ լիվրը հաւասար էր 20 սուի կամ Միացեալ Նահանգաց տասնհաւթնուկէս սէնթի, ոսկեզրամ:
6) Անդ՝ էջ 273:
7) Անդ՝ էջ 99:
8) Անդ՝ էջ 153:
9) Purchase His Pilgrims, Vol. X. էջ 475: